

Սակայն ընդհանրապէս վշտացեալը ինքնին խօսելու միջոցաւ դարման և մխիթարութիւն վշտաց կը փնտռէ, ուստի առանց իմհարցընելուս՝ Տէր-Հայրն ինքնին սկսաւ. — « Ութ հարիւրի շափ կը լինի ժողովուրդս, որք մեծաւ մասամբ Նողայ-Թաթարներ են քրիստոնեայ դարձած ». այս լսելով իմ հետաքրքրութիւնս բազմապատկեցաւ. — « Հայերէն լաւ կը խօսին » հարցուցի: — Ի՞նչպէս չէ, պատասխանեց Տէր-Հայրն, Հայ են ու կան »: Գիւղին իմ վրայ ազդած տխուր տպաւորութիւնը միգիպէս հալածեցաւ Տէր-Հօր խօսելուն միջոց. ինչպէս խօսողին՝ նոյն և նորա ծուխին վրայ համակրութիւն մի սկսայ իմանալ: Նողայ-Թաթարներ, քրիստոնեայ դարձած, հայերէն կը խօսին, և ըստ բացատրութեան Տէր-Հօր « Հայ են ու կան », ապէ անելի ախորժալուր նոյն պարագային մէջ ինչ լսել, և ոչ անգամ կարնայի երևակայել: « Մնցեալօր, շարունակեց Տէր-Հայր, համբերութիւնս հատաւ ժամէն դուրս ելնելով ասի իրենց, որ եթէ այդ բանը ուրիշ անգամ ևս անեն, պիտի յայտնեմ գրով ՚ի Նախիջևան հոգևոր կառավարութեան ». — « Ի՞նչ բան է, ինչու » հարցուցի: « Կու գան չպուխները (ծխա մորճ) ձեռքերը, կկուզ կը շարուն ժամին դըրան առաջը, միակերպ խօսելով ծխաքարչը չեն պաղեցնել. երբ ժամէն վերջ կ'իջնամ մատաղը օրհնելու միաբան ետևէս կու գան, մեծ ախորժակով կ'ուտեն, կը սրբեն մատաղը, կ'երթան բաներնին »: Բարեպաշտ Տէր-Հայրը որովհետև այս պատմելուն միջոց կ'այլալէր, « Մի վշտանաք. Տէր-Հայր, մեղ « մով զրուցեցի, դեռ լաւ չեն ըմբռնած Ձեր ժողովուրդ քրիստոնէական սուրբ հաւատոյ ոգին, « խրատուելու կարօտութիւն ունին ». իսկ մտքէս